

ԿՈՄՍՈՒՅԻ ԲՈԺԵՆԱ

ՍԻԵՍՏՈՊՈԼԿ ԶԵԽԻ

Ես ռամկավարական եմ հոգով և մարմնով, եթէ կամենում էք—նոյն իսկ արմատական, բայց ընկերավարականութեան հետ հաշուել բնաւ չեմ կարող, եթէ մարդկութիւնը իւր ունեցած չունեցած զոյքը եղբայրաբար բաժանէր իւր մէջ—չէ որ կոմսուհի Բոժենային մաս չէր հասնիլ և ոչ մէկը այն մարգարիտներից, որոնք այնքան հրապուրանքով փալլում են նրա ոսկեգոյն շեկ մազերի վրա: Իսկ այդ բանի համար ես իրաւ որ շատ կը տխրէի:

Անշուշտ, նաև հասարակ դաշտային ծաղիկները զեղեցիկ են, բայց այն ևս իրաւ է որ մարդիկ միշտ զմայլւելու են՝ արհեստի օգնութեամբ ազնւացրած պարտիզային հազազիւտ ծաղիկների զեղեցկութեամբ: Թողնենք ուրեմն չիթ հազած հասարակ զեղեցկուհիների կողքին սրանց՝ մետաքսեայ և թաւիշեայ խշխշող հագուստներովը, հպարտ բայց սիրուն էակներին, որոնց անձի մէջ կեանքի բացառական պայմանները կրթեցին իզական զեղեցկութեան մի ծաղիկը: Այս օղեղէն կերպարանքները, որոնց ռաիկները միմիայն ողորմածութիւնից է որ բարեհաճում են կպչել գետնին, որոնց ձեռնիկները չեն կոշտացել բանելուց, որոնց հոգիները չեն տեղեկացել հասարակագործայ հացի հոգսերի մասին և որոնք շնչում են միմիայն բանաստեղծութեան ոսկի շոգիներով. սոքա—բանաստեղծների կերպարանք առած իդէալներն են, որոնք իրականութեան մէջ հնարաւորութիւն ունեն փաթաթւել փալլուն, դիւթական հագուստների մէջ:

Դոցա միջից ամենազեղեցիկը է կոմսուհի Բոժենան. և այդ հրաշալի ծաղիկը բացւել է հայրենի ցեղադրական ծառի վրա, որի

արմատները խորը գնացել են մեր ժողովրդի փառաւոր անցեալի մէջ, իսկ ճիւղերը կրում են շատ ոսկեփայլ անուններով տերեւներ որոնք լցրել են հպարտ փայլով նոյնքան էջ մեր պատմութիւնից:

Եթէ այդ ճիւղերի հետ հիւսւում էին երեւմե և օտարազգի ընծիւղներ, որոնք դառել են աստուածային հրեղէն պատիժ մեր նախնիքների համար, աշուճամենայնիւ ես ներում եմ Կոմսուհի Բոժենային այն արիստոկրատական հպարտութիւնը, որով նա նայում էր իւր նախնիքների մեծ շարքերին:

Ներում եմ նրան և այն թեթեւ կեղծ բարեպաշտութիւնը, որը նրա կերպարանքին տալիս է թեթեւ սուեր անցած գնացած, մութ բաց միւսնոյն ժամանակ բանաստեղծական միջնադարեան գիշերի:

Այդ ամենը ես նրան այն պատճառով եմ ներում որ նա իսկական չեխուհի է:

Եթէ դուք ուզում էք իմանալ այն բոլոր քաղցրահնչիւնութիւնը և շնորհալիութիւնը, որոնց կարող է հասնել չեխ լեզուն, աշխատեցէք նրան լսել Կոմսուհի Բոժենայի սիրուն շօթունքներից: Վերլիցիու ալմաստ ոսանաւորը այդ զմբուխ շօթունքների վրա նրբութեան վերին աստիճանն է, որին կարող է հասնել չեխ լեզուն: Ոչ նախապաշարութիւնները և ոչ էլ կասկերի բացակայութիւնը արգելք չեն դնում ձեր մուտքի դէպի ինքը: Նզէք դուք չեխ գիտնական, գրող, նկարիչ, քանդակագործ, երաժիշտ - և դուք շատ հեշտ կերպով մուտք կունենաք այդ գեղեցկուհու ապարանքը: Նրա մեծահոգի հայրը, որը մեծ մասնակցութիւն է ունենում մեր ժողովրդի քաղաքական կեանքի մէջ, աշխատում է լինել նաև աչքի ընկնող գործիչ մեր գրական, գեղարւեստական և հասարակական կեանքի մէջ: Այդ ասպարէզներում ամեն մի առաջադիմական ձեռնարկութիւն գտնում է նրա անձի մէջ մի երկրպագու և առատաձեռն պաշտպան. նա մեծահոգի մեկնասէ է տաղանդաւոր երիտասարդ արտիստների համար: Եթէ մի տեղ յայտնւում է մի չեխ նկարիչ մի փառաւոր գործը, նա յայտնւում է իբրեւ գնող, նրա պալատը և ազգիները զարդարւում են չեխ քանդակագործի ստեղծագործութիւններով, նրա գրադարանից բացակայ չէ և ոչ մէկը թանգազին պտուղներից չեխ գրականութեան: Նրա հիւրանոցներում

տիրում է չեխ լեզուն, նրա բոլոր կառավարիչները և ծառաները չեխեր են և նրա բոլոր մատենաները և թղթակցութիւնները նրա կառավարչներում չեխ լեզուով են պահուում:

Մի խօսքով եթէ ով և է ուզում է չեխ բարձր հասարակութեան կեանքից բո՛հան գրել, թող նա մուտք բաց անի իւր համար այդ պալատում կամ կոմսի ամառայ բնակատեղում՝ մի փառաւոր զղեակ չեխ փարթամ երկրի ծոցում, զղեակ—որի հիմնական և հնադարեան մասերը նորոգւում և պահպանւում են խորին յարգանքով, իսկ նոր շէնքերը կառուցանւում են աւելի ընկնող չեխ ճարտարապետների իրաւ որ նշանաւոր ճաշակով: Երբ որ այնտեղ կոմսուհի Բոժենային տեսնէք, որը կատարելիս լինի փոքրիկ տնային բեմի վրա Սմեռանայի «Վաճառած Հարսի» մէջ Մաժինկայի (Մարիամ) դերը, երբ կոմսի գերդաստանը զարճանում է հարեան ազնւականութեան հետ չեխ կատակերգութիւններ և օպերաներ ներկայացնելով, կամ եթէ դուք նրան տեսնելիս լինիք ճեմելիքում հաղւազիւտ ծառերի սուերի տակ, խորասուզած նորագոյն չեխ բանաստեղծութիւնների մի շքեղ կազմած հատորի ընթերցումով—այն ժամանակ ձեր աչքերը անշուշտ կըլցւեն բերկրութեան և հիացմունքի արտասուքներով:

— Հերիք այս երկար ձանձրալի առաջաբանը—կտրում էք դուք անհամբերութեամբ իմ խօսքը:

Աւելի լաւ է որ ասես թէ ուր է այդ զղեակը, ի՞նչ է այդ տնայտ կոմսի և նրա հրաշալի աղջկայ անունները որոնք սակայն, դատելով այն բանից ինչ որ դու նրանց մասին պատմում ես, պէտք է որ վաղուց հպարտութեամբ և շնորհակալութեամբ արտասանէին ամբողջ չեխ երկրում:

Այս, յարգելի ընթերցողներ, այդ զղեակը գոյութիւն ունի միայն երեւակացութեանս մէջ, իսկ կոմսուհի Բոժենան ոչ այլ ինչ է եթէ ոչ իմ իդէալը, որը ես իզուր պտուում եմ իրականութեան մէջ: Նա ներկայանում է իմ հոգեղէն աչքերիս առաջ իբրեւ մի որոշ, հրաշալի շքեղութեան տեսիլ, որին ես իզուր եմ պտուում հոգեղէն աչքերովս: Սակայն ես դեռ չոյսըս չեմ կորցրել նրան վերջի վերջոյ գտնելու: Ես այնքան եմ կարգում այդ բազմաթիւ չեխ ազնւականութեան մասին, որին մեր թշնամի մամուլն իսկ «der

tschechische Adel» ¹⁾ է կոչում, ես լսում եմ որ նա մեզ հետ ընթանում է առանց կեանք և կալածք խնայելու, որ նա իսկ կանգնած է մեր ժողովրդական շարժումի գլխին, և ես գիտեմ նույնպէս որ այդ մեր չեխ ազնւականութիւնը անազին կալածների տէր է և իւր հարստութեամբ շատ է գերազանցում տեղական գերմանացի ազնւականութեանը:

Բայց տարօրինակ բան. չը նայած իմ անվերջ խուզարկութիւններին — ես ոչ մի տեղ չեմ կարողանում գտնել այդ չեխ ազնւականութիւնը: Ես ուզել եմ տեղեկութիւններ գրականագէտներից — սրանք ոչինչ: չը գիտեն նրա մասին: Ես դիմեցի նկարիչների խմբին — սրանք ինձ միանգամայն ծաղրեցին: Անուշադիր թողնելով սոցա ծաղրը — ես շարունակում էի պտուել և վերջապէս նրանց միջից գտայ մի երիտասարդ նկարիչ, որը իրաւ վայելում է մի քանի ազնւականների համակրութիւնը — սակայն դժբաղդաբար այդ ազնւականները գերմանացիներ են:

Յուցահանդիսում յայտնւեց չեխ նկարչի մի հւշակաւոր պատկերը. պահապանի նման ժամերով կանգնած էի ես այդ պատկերի մօտ — երես առ երես տեսնելու համար չեխ ազնւականութիւնը: Բայց ծպտուն իսկ չըլսեց նրա մասին և պատկերը գնաց օտար երկիրներ թափառելու: Առանց հոգա խնայելու ես շրջեցի բոլոր գեղադարական ամսագրերի խմբագրութիւնները — սրանց բաժանորդների ցանկում չեխ ազնւականութիւնը գտնելու համար: Արդիւնքը զրօ էր, ինչպէս որ այդ պատահում է շատ յաճախ: Ես այցելեցի չեխ գրավաճառներին. գուցէ նրանք որ և է տեղեկութիւն ունենային չեխ ազնւականութեան մասին: Գրավաճառները կարծեցին թէ ես իրանց ծաղրում եմ, իսկ շքեղ կազմերով հրատարակողներից մէկը քիչ էր մնում ինձ գժառուն ուղարկի:

Մտքովս անցաւ թէ երևի չեխ ազնւականութիւնը զաղտնի կերպով է չեխ գրքեր առնում և պաշտպանում չեխ գեղարւեստները, ծածկելով իւր չեխասիրութիւնը անմատչելի պալատներում և դղեալներում:

Լրտեսի նման ես թափառում էի ազնւականների տների մօտերը,

¹⁾ Գերմաներէն նշանակում է սչեխ ազնւականութիւնը:

կաշառում էի տան ծառաներին և այգեսպաններին և յաճախում այն զինետները, ուր երբեմն ժողովում են լակեյները և աւագ կառավարները: Բայց շողոքորթութիւնը և խոնարհութիւնը, որոնց շնորհիւ ես մուտք գտայ կարմիր ժիւղաների և արհամարաբար դէպի վեր ցցւած ծնօտների այս փակ շրջանը—ապարդիւն էին. ես չը լսեցի և ոչ մի հատ արխատկրատական չեկա տան անւան մասին, ուր իշխէր չեկա բառաւոր, ոչ մի չեկա օրիորդի անուն լսեցի, որը չեկա գրքեր կարդալիս լինէր, իսկ երբ ես փորձեցի իմանալ արդեօք կայ այնպիսի մի չեկա տուն ուր տրւում լինէին չեկա լեզուով ներկայացումներ—արած հարցս յարուցեց համարձակ քրքիշի մի կատարեալ պայթում լակեյների սեղանի մօտ:

Այսպէս ահա բոլոր խուզարկութիւններս բանի տեղ չանցան: Սակայն, ի սէր Աստծոյ, ուր մնաց չեկա ազնւականութիւնը: Ուր կորաւ: Ուր է պահւել, Նրա մասին տեղեկութիւն չունի արդեօք բարի ընթերցողներից մէկը: Կամ գուցէ այդ բոլոր ազնւականութիւնը երեւակայութեանն ողնապիսի մի ստեղծագործութիւն է, ինչպէս և իմ կոմնուհի Բոթենան:

Սիրտս պահած ունի իւր խորքում մի յոյս ևս: Երեկոյեան թողնում եմ մրգի վաճառանոցի մօտ գտնւած համեստ բնակարանս և թափառում գերմանական թատրոնի շուրջը, որի մօտ կանգ են առնում երկար շարքերով շքեղ կառքեր, դռնակների վրա ազնւական տոհմադրոշով իսկ իրանց տեղերում վերոյիշեալ կառավարները և լակեյները: Ազնւացեղ նժուգները բարձր բարձրացնում են իրանց գեղեցիկ բաշերը և կնիւկներով անհամբեր փորում հողը, անիւները ձայներ են հանում, ասնդուլքի վրա երևում են կանացի օղեղէն ֆիգուրներ արխատկրատական չքնաղ դէմքերով, խշխշում են մետաքսեայ շորերը, շողշողում են թանգազին զարդարանքները և լսում են քաղցր գերմանական հնչիւններ...

Շարունակում եմ փողոցով դնալ ազգային մեծ թատրոնի աւարտած շինութեան առաջ: Հպարտութեամբ նայում եմ այս հրաշալի քարէ հսկայի վրա, այս քարէ մուսանների վրա, որոնց գեղեցիկ ֆիգուրները լողում են բարձրում լուսնեակի արծաթափայլ ճառագայթների մէջ, այս վեհ, փառութամբէն զարդարւած թատրոնի մուտքին և մի երանելի երազ տիրում է հողում...

Ես տեսնում եմ մի խումբ հարուստ էքսպատների այս պերճ մուտքի մօտ խոնաճ. նրանց մէկից մարմարիոնի աստիճանի ուռ է դնում մի չքնաղ ոտիկ և սիլֆիդի այդ ոտի վրա վերամբառնում է մի աղջկայ հրաշալի պատկերը: Նրա քնքոյշ դէմքը ժպտում է ձիւնափայլ փետուրների տակից, որոնք շրջապատում են ոսկով ասղնազործած հովհարը, իսկ թեթեւ շղարշի տակից փռւած ծածանւում են շեկ ոսկեգոյն մազերը—կոմսուհի Բոժենայի... Այս երազի տպաւորութեան տակ ես բոլորում եմ այս շինութիւնը մինչև նրա քամակին գտնւող ժամանակաւոր, փոքրիկ և լուսաւորւած թատրոնը. սրա առջև կանգնած են միայն վարձու աղքատիւի, ներկը գնացած դրոժկաներ, քնաթաթախ կամ հայհոյող կառապանը իւր տեղում մաշւած հագուստով և համեստ նիհար ձիով, որը խորին կարեկցութիւն է յարուցանում բոլոր մօտովը անցնողների...